

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

02 սեպտեմբերի, 2020 N 61

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՆՈՐՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
ԿԻՐԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Նորշեն համայնքում կիրառել հետևյալ սահմանափակումները.

1) Սահմանել Մարտունու շրջանի Նորշեն համայնքի վարչական տարածք մուտք գործելու և ելք կատարելու հատուկ ռեժիմ՝ արգելելով անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման նպատակով անձանց տեղաշարժի և Պարետի ցուցումով՝ բացառիկ այլ դեպքերի.

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված Նորշեն համայնքի վարչական տարածք մուտք գործելու սահմանափակման համար բացառություն սահմանել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 03-ը՝ ժամը 14:00-ն՝ թույլատրելով Նորշեն համայնքում մշտական բնակության իրավունք ունեցող կամ փաստացի բնակվող անձանց մուտքը.

3) Հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու նպատակով ԱՀ ոստիկանության կողմից սահմանված վայրերում տեղադրել հատուկ անցակետեր՝ անձանց ու տրանսպորտային միջոցների շարժը վերահսկելու նպատակով.

2. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

3. ԱՀ ոստիկանության պետին՝ երկօրյա պարբերականությամբ Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:

4. ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին, ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավարին, ԱՀ Մարտունու շրջանի Նորշեն համայնքի ղեկավարին՝ օժանդակել ԱՀ ոստիկանության՝ սույն որոշմամբ սահմանված գործառույթների կատարմանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 02-ին՝ ժամը 15:00-ին:



Ժ. ՄԻՐՉՈՅԱՆ